դասագրքերով և մեթոդական ուղեցույցներով: 2013թ. ապրիլ-մայիս ամիսներին նույն կազմակերպության կողմից վերապատրաստման դասընթացներ են անցկացվել համալսարանի ֆրանսերեն լեզու դասավանդող դասախոսների համար և տրվել են հավաստագրեր: «Թոշակառու ուսուցիչների միություն»-ը 2012-2013 ուստարում «Ֆրանսերեն լեզու և գրականություն» բաժնի բարձր առաջադիմություն ունեցող սոցիալապես անապահով ուսանողներին ֆինանսական աջակցություն է ցույց տվել:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը համագործակցում է Վալանսի տեխնոլոգիական համալսարանի հետ, որի արդյունքում մասնաճյուղի հինգ ուսանող և մեկ դասախոս Վալանսում ապրիլին մեկամսյա վերապատրաստման դասընթացներ են անցել և ստացել հավաստագրեր:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	15	1

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. Այդինյան Ա.Ժ., Փոխառությունների յուրացման ձևաբանական ցուցանիշները, «Русский язык в Армении», № 7, Երևան, 2012, էջ 36-43:
2. Այդինյան Ա.Ժ., Վերնագրի իմաստակառուցվածքային բնութագրումները, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., թիվ 1(54), Երևան, 2013, էջ 135-142:
3. Այդինյան Ա.Ժ., Հայաստանի ռուսալեզու մամուլի էջերով, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ, թիվ 1(7), Երևան, 2013, էջ 160-164:
4. Մարդանյան Ա.Ս., «Սիրտը» տարբեր ժողովուրդների մշակույթում, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ, թիվ 1(7), Երևան, 2013, էջ 160-164:
5. Մարդանյան Ա.Ս., Վանեսյան Ա.Ա., Ասացվածքը որպես բազմաձայնության աղբյուր, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ, թիվ 1(7), Երևան, 2013, էջ 173-174:

6. Մարդանյան Ա.Ս. «Ձեռք» բառով կազմված ֆրանսերեն ասացվածքները միջմշակութային համատեքստում, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ, թիվ 3(6), Երևան, 2013, էջ 187-188:
7. Վանեսյան Ա.Ա., Լեզվաբանական բազմաձայնություն, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ, թիվ 3(6), Երևան, 2013, էջ 174-184:
8. Վանեսյան Ա.Ա., Խոսույթում բազմաձայնություն առաջացնող երևույթները, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ, թիվ 1(7), Երևան, 2013, էջ 169-172:
9. Ստեփանյան Ա.Ա., Տեղեկագիտական տեխնոլոգիաների գործածությունը Ֆրանսիայի երկրագիտության դասերին (ֆրանսերեն), «Լինգվա» հրատ, Երևան, 2012, էջ 7- 9:
10. Հարությունյան Լ.Մ., Հայ ընտանիքի առանձնահատկությունների հաշվառումը, նպատակային կիրառումը որպես դաստիարակության արդյունավետության պայման, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 2012, էջ 92-95:
11. Հարությունյան Լ.Մ., Ընտանիքում ծնողների կողմից երեխայի վրա սխալ ներգործությունների հետևանքով առաջացած դաստիարակչական սխալները, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 2012, էջ 90-93:
12. Հարությունյան Լ.Մ., Ընտանիքի անդամների առողջ, ազնիվ ու անկաշկանդ փոխհարաբերությունների ամրապնդումը որպես դաստիարակության արդյունավետության պայման, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, 2012, էջ 94-99:
13. Հարությունյան Լ.Մ., Ծնողների և երեխաների փոխհարաբերությունների ոճերը որպես ընտանեկան դաստիարակության արդյունավետության պայման, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ, թիվ 3(6), Երևան, 2012, էջ 119-125:
14. Հարությունյան Ք.Մ. “Proverbs or Anti - proverbs” AASE, Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge, # 2 (9), 2012, էջ 5-7:
15. Հարությունյան Ք.Մ. “Coloure Symbolism in William Shakespeare’s works”, «Աստղիկ» հրատ., Երևան, 2012-2013, # 22- 23, էջ 8- 10:

Զեկուցումների թեզիս

1. Այդինյան Ա.Ժ. «Перспективные вопросы мировой науки», София, Болгария, декабрь 2012г.:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Խուդավերդյան Նելլի Բաբկենի, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ֆակուլտետի մասնագիտությունները

Շիֆր Մասնագիտություններ՝

080100 Տնտեսագիտություն

100100 Մեթոդ

Կրթական աստիճան, մասնագիտություն	Ուսանողների թիվը՝ 162							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	անվճ	վճ	անվճ	վճ	անվճ	վճ	անվճ	վճ
Բակալավրիատ								
Տնտեսագիտություն	5	28	-	-	3	28	14	31
Մեքվիս	4	9	-	-	5	14	8	13
Ընդամենը	9	37	-	-	8	42	22	44

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադի- մության %-ը
		անվճ	վճ		
Բակալավրիատ					
Տնտեսագիտություն					
1-ին	30	-	13	-	48
Տեսական					
տնտեսագիտություն					
3-րդ	31	-	16	-	42,8
4-րդ	45	1	13	1	58
Մեքվիս					
1-ին	11	1	4	-	42,8
3-րդ	19	1	7	2	50
4-րդ	21	-	10	-	23
Ընդամենը	157	3	63	3	44,1

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադի- մության %-ը
		անվճ	վճ		
Բակլավրիատ					
Տնտեսագիտություն 2-րդ	33	1	21	-	33,3
Տեսական տնտեսագիտություն 3-րդ	31	-	4	4	87
Մերվիս 2-րդ	13	-	3	-	77
3-րդ	19	-	4	6	80
Ընդամենը	96	1	32	10	69,3

Մասնագիտություն	Ընդամենը՝ 66, այդ թվում՝ նախորդ տարիներից՝ 0
	բակլավրիատ (գերազանցության դիպլոմով)
Տնտեսագիտություն	45 (3)
Մերվիս	21 (4)
Ընդամենը	66 (7)

Շրջանավարտներ

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Մարգարյան Հարություն Ալեքսանի, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Խուդավերդյան Նելլի Բաբկենի, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Պետրոսյան Արսեն Գառնիկի, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ավետիսյան Գայանե Հրաչիկի, տնտ. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Էդիլյան Նաիրա Ալբերտի, դասախոս
5. Սարիբեկյան Անուշ Աղաջանի, դասախոս

Համատեղողներ

1. Գալստյան Գագիկ Սերգեյի, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Մկրտչյան Նարեկ Ստեփանի, տնտ. գիտ. թեկնածու, ասիստենտ
3. Մակարյան Հայկ Անուշավանի, տնտ. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Սիրոյան Գարիկ Աշոտի, տնտ. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Ավագյան Մանե Էդվարդի, ասիստենտ
6. Առաքելյան Վահագն Վոլոդյայի, դասախոս
7. Խալաթյան Անի Սարգսի, դասախոս
8. Ղազարյան Վանյա Լավրենտի, դասախոս
9. Մարուխյան Վեհանուշ Սամվելի, դասախոս
10. Մկրտչյան Հասմիկ Վանուշի, դասախոս

Ուսումնառության աշխատակիցներ

1. Զախարյան Ալլինա Կոմիսարի, գործավար

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը 2012 – 2013 ուսումնական տարում աշխատանքներ է տարել «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության ուսումնական պլանի և առարկայական ծրագրերի բարելավման ուղղությամբ: Պարբերաբար լսվել են ամբիոնի դասախոսների հաշվետվությունները՝ գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի մասին:

Հաշվետու ուսումնական տարում թարմացվել, ամբողջացվել ու ավարտին է հասցվել ամբիոնի գծով բոլոր դասընթացների և պրակտիկայի ծրագրերը, նորացվել են հարցաշարերը և քննական տոմսերը:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը ակտիվորեն համագործակցել է մասնաճյուղի ՈԻԽ-ի և ՈԻԳԸ-ի հետ՝ կոորդինացնելով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բոլոր ֆակուլտետների այն քննարկումները, որոնք նվիրված են եղել տնտեսագիտական թեմաներով վերլուծություններին:

Ամբիոնը 2012 – 2013 ուստարում կազմակերպել է ուսանողական գիտաժողով «Տնտեսական խնդիրները զարգացող և անցումային շրջանի երկրներում» թեմայով: «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության յոթ ուսանող մասնակցել են այդ գիտաժողովին, ամբիոնից այդ աշխատանքները դեկավարել է Գ. Ավետիսյանը:

Մասնաճյուղի ՈԻԳԸ հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ ամբիոնը ՈԻԳԸ –ի հետ համատեղ կազմակերպել և անց է կացրել գիտական կոնֆերանս՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության ուսանողների մասնակցությամբ: Կոնֆերանսում ներկայացված լավագույն գիտական աշխատանքները ամբիոնի կողմից տպագրության են երաշխավորել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈԻԳԸ-ի «Ուսանողական զեկուցումների շարք» պարբերականում:

Այս ուսումնական տարում ամբիոնի ասիստենտ Գ. Սիրոյանը մասնակցել է Հայստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եդեգնաձորի մասնաճյուղում անցկացված «Տարածքային տնտեսության համաչափ զարգացման հիմնախնդիրները» թեմայով հանրապետական տնտեսական գիտաժողովին՝ նվիրված մասնաճյուղի հիմնադրամի 5-ամյակին:

Հաշվետու ժամանակաշրջանում «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի կողմից ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կազմակերպվել է «Բուհերի կառավարման համակարգի բարելավման ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով հանրապետական գիտագործնական կոնֆերանս:

Կոնֆերանսում ամբիոնի դասախոսների կողմից ընթերցված գիտական զեկուցումները նախապատրաստվում են տպագրության:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը /նշելով նաև թեմայի կոդը/	Ղեկավար
1.Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ –ում:	Մարգարյան Ն. Ա.

Թեմա 1. Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ –ում

Ծրագիրը մեկնարկել է 2012թ. հոկտեմբերի մեկից և նախատեսված է երկու տարվա համար: Ավարտին է մոտենում ծրագրի առաջին փուլը, որի ընթացքում իրականացվել է մասնագիտական գրականության վերլուծություն, հետազոտությունների արդյունքների հավաքում, մշակում, խմբավորում, ամփոփում, որոշ հայեցակարգային հարցադրումների ու մոտեցումների հստակեցում, վարկածների առաջաշում: Այս փուլում հրատարակվել է երկու հոդված, որոնցից մեկը՝ Մոսկվայում, իսկ երրորդ հոդվածն ընթացքի մեջ է:

Երկրորդ փուլն սկսվելու է ապրիլից և հիմնականում ընդգրկելու է դաշտային աշխատանքներ (սոցիալաբանների անցկացում, որակական հարցազրույցներ նեղ մասնագետների հետ, ֆոկլուս – խմբեր, կլոր սեղանների, քննարկումների կազմակերպում և այլն): Դաշտային աշխատանքների հարցումների համար որպես թիրախային մարզեր ընտրվել են Տավուշը, Սյունիքը և Երևան քաղաքը:

Այս աշխատանքներում ներգրավված են նաև առաջադեմ ուսանողներ, ովքեր իրենց նախաավարտական պրակտիկան կանցնեն իրականացվող հետազոտության շրջանակներում:

Երկրորդ տարվա ընթացքում նախատեսվում է իրականացնել ամփոփում, համեմատություններ, թարգմանություններ, հրատարակումներ, քննարկումներ, շնորհանդեսներ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
				15	

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ**Հոդված**

1. Մարգարյան Հ. Ա., Գործնական հումանիզմի քաղաքատնտեսական տեսլականը. անեղծն ու եղծվածը տեսության և իրականության մեջ, Գիտական հոդվածների ժողովածու, Ավ. Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի հրատ., Երևան, 2012, էջ 95-115:
2. Մարգարյան Հ. Ա., Աստվածատուրով Ս. Վ., Անցումային տնտեսության միգրացիայի ռիսկերը մարդկային կապիտալի վարարտադրության լույսի ներքո, Գիտական հոդվածների ժողովածու, Ավ. Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի հրատ., Երևան, 2012, էջ 156-160:
3. Մարգարյան Հ. Ա., ՀՀ աշխատաշուկայի գենդերային բնութագիրը՝ բուհերի առաքելության սահմանման կողմնորոշիչ, Միջազգային II գիտական կոնֆերանսի հոդվածների ժողովածու, Ավ. Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի հրատ., Երևան, 2013, էջ 31-34:
4. Գալստյան Գ. Ս., Նոր քննական հայացք Մարքսի տնտեսագիտական ուսմունքին, «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2012, 4(40), էջ 12-22:
5. Գալստյան Գ. Ս., Մարքսի տնտեսագիտական տեսությունը և դրա ժամանակակից նշանակությունը, Տարեգիրք 2012, Տնտեսագիտության ֆակուլտետ, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 69-78:
6. Սիրոյան Գ. Ա., Միգրացիոն տենդենցները ՀՀ-ում XXI դարի սկզբում, (անգլերեն), «Տնտեսական քաղաքականությունը ճգնաժամերի ժամանակ. Արտարկտների հավաքածու», Կրակովի տնտեսագիտական համալսարան, 2012, էջ 186-187:
7. Սիրոյան Գ. Ա., Հայաստանից Ռուսաստանի Դաշնություն բնակչության արտագաղթի մոտիվների և գործոնների էկոնոմետրիկ հետազոտություն (ռուսերեն). – ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 439-450:
8. Մակարյան Հ. Ա., Հարկային համակարգի զարգացման համաշխարհային միտումները, «Օրենք և իրականություն», #2 (196), Երևան, 2012, էջ 35-37:

9. Մակարյան Հ. Ա., Հարկային համակարգի զարգացման համաշխարհային միտումները և դրա կատարելագործումը ճգնաժամային զարգացումների համատեքստում, «Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա», #3 (141), Երևան, 2012, էջ 38-40:
10. Մակարյան Հ. Ա., ՀՀ հարկային քաղաքականության հակաճգնաժամային միջոցառումների ընդհանուր բնութագիրը. – Հայաստան, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, #1 (31), Երևան, 2012, էջ 40-43 :
11. Սարիբեկյան Ա. Ա., ՀՀ առողջապահական ոլորտի ծառայությունների շուկայի ընդհանուր բնութագիրը (ռուսերեն), Տարեգիրք 2012, Տնտեսագիտության ֆակուլտետ, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 221-224:
12. Марзпаян А. А., Аствацатуров С. В., Миграционные риски переходного периода в контексте теории человеческого капитала (к постановке проблемы), Московское научное обозрение, Научно–практический журнал, 7(23), Том 2, 2012, с. 47-48:
13. Marzpanyan H. A., Literacy education and economic development (conceptual approach), «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», N 3, Երևան, 2012թ., էջ 47 – 48:
14. Marzpanyan H. A., Government Financial Performance Based on Stablization policies in Developing Countries, Գիտական հոդվածների ժողովածու, Ավ. Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի հրատ., Երևան, 2012, էջ 161-168:
15. Marzpanyan H. A., Astvatsaturov S. V., Siroyan G. A., Peculiarities of migration risks in armenniaas they relateto human capital reproduction, Tbilisi, 2013:

ՏՈՒՐԻԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Պոտոսյան Ակսել Հարությունի, աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ասիլբեկյան Պավել Նորիկի, ասիստենտ
2. Լաչիկյան Լևոն Երվանդի, ասիստենտ
3. Ուլիխանյան Ալինա Վոլոդյայի, ասիստենտ
4. Բեգինյան Լիանա Գրիշայի, դասախոս
5. Մարգարյան Նարինե Գառնիկի, դասախոս

Համատեղողներ

1. Օհանջանյան Ռուբեն Սամվելի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Ազիզյան Հռիփսիմե Մկրտիչի, մանկ.գիտ. թեկնածու, ասիստենտ
3. Սարգսյան Տիգրան Արտավազդի, աշխ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնառական աշխատակիցներ

1. Ուլիխանյան Ալինա Վոլոդյայի, գործավար

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

ԵՊՀ ԻՄ-ի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնը 2012-2013 ուստարում աշխատանքներ է կատարել «Մերվիս» մասնագիտության առարկայական ծրագրերի արդիականացման ուղղությամբ: Բարձրացվել են մասնագիտության գծով նախատեսված ուսումնական և արտադրական պրակտիկաների արդյունավետությունը՝ պրակտիկաների անցկացման բազայի ընդլայնման և պրակտիկայի ծրագրերը գործատուների պահանջներին համապատասխանեցնելու միջոցով: Ուսումնական գործընթացի բարելավման, դասապրոցեսների արդիականացման և լավագույն փորձի փոխանակման նպատակով անց են կացվել դասալսումներ, բաց դասեր օնլայն լսարանում՝ դասապրոցեսում տեխնիկական միջոցների կիրառմամբ: Կատարվել են դասալսումների քննարկումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնը ծավալել է նաև գիտական գործունեություն: Ամբիոնի դասխոսների կողմից հրատարակվել է 7 գիտական հոդված, տպագրության փուլում է դոցենտ Ա. Պոտոսյանի «Տուրիզմի հիմունքներ» ուսումնական ձեռնարկը: Ամբիոնի դասախոսներ Պ. Ասիլբեկյանի և Ա. Ուլիխանյանի կողմից աշխատանքներ են տարվում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարության ուղղությամբ: Մասնաճյուղի ՈԻԳԸ-ի հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ կազմակերպված գիտական կոնֆերանսներին «Մերվիս» և «Կիրառական արվեստ» մասնագիտությունների ուսանողների կողմից գիտական զեկույցներ են ընթերցվել: Կոնֆերանսում ներկայացված լավագույն գիտական աշխատանքները ամբիոնի կողմից տպագրության են երաշխավորել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈԻԳԸ-ի «Ուսանողական զեկույցումների շարք» պարբերականում: Դրանց թվում են «Մերվիս» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողներ Լ. Ամիրխանյանի «Զբոսաշրջիկների

տեղավորման միջոցների և սննդի կազմակերպումը Տավուշի մարզում», Հ. Դավթյանի «Ագոտորիզմը որպես գյուղական բնակավայրերի զարգացումը խթանող միջոց», Ա. Թամրազյանի «Թանգարանային գործի հիմնախնդիրները Տավուշի մարզում և «Կիրառական արվեստ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհիներ Ն. Օրդինյանի «Երվանդ Քոչար. «Տարածական նկարչություն», Ա.Ահարոնյանի «Ռեմբրանտ Հարմես վան Ռեյն», Մ. Մադաթյանի «Մարտիրոս Սարյանը՝ գույնի վարպետ», Կիրառական արվեստի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհիներ Տ. Աբրահամյանի «Դիմանկարի ժանրը պատմական զարգացման փուլերում», Շ. Բաղդասարյանի «Ֆրանսիսկո Գոյա» գիտական ընթերցումների նյութերը:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը /նշելով նաև թեմայի կողը/	Ղեկավար
Երևանի բնակելի թաղամասերում բնակության միջավայրի վիճակի ուսումնասիրություն	Սարգսյան Տ.Ա.
Զբոսաշրջության կայուն կառավարման ոլորտում մագիստրոսական միջազգային առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների կազմում	Սարգսյան Տ.Ա.

Թեմա 1.

Կազմակերպության անվանումը՝ Միջազգային վիճեգրադյան հիմնադրամ, Հունգարիայի գիտությունների ակադեմիայի աշխարհագրական հետազոտությունների ինստիտուտ

Համագործակցության նպատակը՝ Փոքր դրամաշնորհի շրջանակներում դաշտային հետազոտություններ Երևան քաղաքում՝ ուսանողների ներգրավմամբ

Համագործակցության արդյունքները՝ Երևանի բնակելի թաղամասերում բնակության միջավայրի վիճակի ուսումնասիրություն արդյունքների հիման վրա տպագրվել է հոդված Հունգարիայի գիտությունների ակադեմիայի ամսագրում՝ 2013թ. ընթացքում:

Թեմա 2.

Կազմակերպության անվանումը՝ Եվրամիության TEMPUS ծրագիր և Յադեի համալսարան (Գերմանիա)

Համագործակցության նպատակը՝ Զբոսաշրջության կայուն կառավարման ոլորտում մագիստրոսական միջազգային առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների կազմում

Համագործակցության արդյունքները՝ Ընթացքի մեջ է: Ակնկալվում է կազմել զբոսաշրջային կրթության ոլորտում միջազգային մագիստրոսական կրթական ծրագրեր՝ Հայաստան-Վրաստան-Ադրբեջան համագործակցության շրջանակներում

Մասնակից դասախոսները՝ Տ.Սարգսյան, Ա.Ավագյան, Ս.Սուվարյան, Գ.Ալեքսանյան, Մ.Գրիգորյան, Լ.Սարգսյան:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
		1		7	

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնական ձեռնարկ

1. Պոտոսյան Ա. Հ., Տուրիզմի հիմունքներ, 206 էջ, ընթացքի մեջ է:

Հոդված

1. Պոտոսյան Ա. Հ., ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի տարածաշրջանային տարբերությունները և հիմնախնդիրները, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 3(6), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 189-197:
2. Օհանջանյան Ռ. Ս., Հայաստանի անդրկովկասյան ժողովուրդների ազգային գրականության տարածման խնդիրները խորհրդային և հետխորհրդային շրջաններում, «Հնագիտություն, ազգագրություն, կովկասի բանահյուսություն» (միջազգային կոնֆերանսի նյութեր), Երևան, 2013, 8 էջ:
3. Ազիզյան Հ. Մ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները, Երևան, 2013, 4 էջ:
4. Սարգսյան Տ. Ս., Մերվիսի աշխարհագրություն. բովանդակությունը, տեղը գիտությունների համակարգում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», №1-2, Երևան, 2012, 3 էջ:
5. Սարգսյան Տ.Ա., Երևանի բնակելի թաղամասերում բնակչության միջավայրի վիճակը, Հունգարիայի ԳԱԱ հրատարակություն, Բուդապեշտ, 2013, 7 էջ:
6. Саргсян Т. А, Гаспарян М., О некоторых вопросах устойчивого развития туризма на примере горных районов Республики Армения, «Науки о Земле: устойчивое развитие

территорий-теория и практика» (сборник материалов международной научно-практической конференции). Чебоксары, 2012, с. 100-114.

7. Ուլիխանյան Ա. Վ., Հայաստանի վաղմիջնադարյան կենտրոնագմբեթ եկեղեցիների կոնստրուկտիվ առանձնահատկությունների շուրջ, «Ակունք», Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 3(6), էջ102-108:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Այվազյան Կամո Բենիկի, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ

Ֆակուլտետի մասնագիտությունները

Շիֆր **Մասնագիտություններ՝**

071100 Կիրառական արվեստ

Մագիստրատուրա Կիրառական արվեստ

Կրթական աստիճան, մասնագիտություն	Ուսանողների թիվը՝ 88					
	II կուրս		III կուրս		IV կուրս	
	անվճ	վճ	անվճ	վճ	անվճ	վճ
Բակալավրիատ						
Կիրառական արվեստ	5	15	5	24	12	18
Մագիստրատուրա	1	8	-	-	-	-

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
		անվճ	վճ		
բակալավրիատ					
Կիրառական արվեստ 1-ն	19	-	-	-	100

3-րդ	29	-	10	-	65,5
4-րդ	29	3	8	-	62
Ընդամենը	77	3	18	-	75,8
<i>Մագիստրատուրա</i>					
Կիրառական արվեստ 1-ն	10	1	-	5	90

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
		անվճ	վճ		
Բակլավրիատ					
Կիրառական արվեստ 1-ին	20	-	1	-	95
3-րդ	29	-	8	1	72,4
Ընդամենը	49	-	9	1	84
<i>Մագիստրատուրա</i>					
Կիրառական արվեստ 1-ն	9	-	1	7	88,9

Շրջանավարտներ

Մասնագիտություն	Ընդամենը՝ 30, այդ թվում նախորդ տարիներից՝ 0
	Բակլավրիատ (գերազանցության դիպլոմով)
Կիրառական արվեստ	30 (0)
Ընդամենը	30 (0)

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Բուդդարյան Ռաֆիկ Գարեգինի, Դիզայներների Միջազգային ասոցիացիայի
անդամ, ասիստենտ

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Այվազյան Կամո Բենիկի, տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Չիբուխյան Անուշ Լյուբիկի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
3. Չիբուխյան Դոնարա Լևոնի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
4. Պողոսյան Ռուզաննա Կիմի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
5. Դիլբարյան Անդրանիկ Սրաֆիլի, դասախոս

Ուսումնառական աշխատակիցներ

1. Ասլանյան Գայանե Սարգսի, ամբիոնի գործավար
2. Պողոսյան Դավիթ Անդրանիկի, խեցեգործության արվեստանոցի վարիչ
3. Աբազյան Անահիտ Աթաբեկի, ուսվարպետ
4. Չիբուխյան Դոնարա Լևոնի, ուսվարպետ
5. Պողոսյան Ռուզաննա Կիմի, ուսվարպետ
6. Դիլբարյան Անդրանիկ Սրաֆիլի, ուսվարպետ

**Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված աշխատանքների
ամփոփում**

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ԻՄ-ի դեկորատիվ կիրառական արվեստի և գծանկար, գունանկարի ամբիոնները համատեղ կազմակերպել են հետևյալ ցուցահանդեսները.

1. Մեծ եղենի գոհերի հիշատակին նվիրված ցուցահանդեսների շարք:
2. Իջևանի քաղաքային շատրվանների տարածքում I և III կուրսերի ուսանողների ստեղծագործությունների ցուցադրություն:
3. Իջևանի քաղաքային պատկերասրահում Տավուշի և Լոռու մարզերի գեղանկարիչների ստեղծագործությունների համատեղ ցուցահանդես՝ «Աշնանային գույներ» խորագրով:
4. Բերք ու բարիքի տոնին նվիրված մագիստրատուրայի ուսանողների ստեղծագործությունների ցուցադրություն:
5. 2012-2013 ուստարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների ցուցադրություն ԵՊՀ ԻՄ-ի բակում՝ Ուկրաինայից հրավիրված պատվիրակության այցի կապակցությամբ:

6. Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների աշխատանքների ցուցադրություն ԵՊՀ ԻՄ-ի ադմինիստրատիվ շենքի բակում:
7. Գեղեցկության և մայրության տոնին նվիրված ցուցահանդես Իջևանի քաղաքային պատկերասրահում:
8. Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին նվիրված ցուցադրություն նիստերի դահլիճում և նրա նախասրահում:
9. Մասնակցություն նկարիչների միությունում կազմակերպված երեք հանրապետական ցուցահանդեսների:

Դեկտրատիվ կիրառական արվեստի ամբիոնում քննարկվել և հաստատվել են 2012-13 ուստարվա աշխատանքային պլանները և առարկայական ծրագրերը, ավարտական աշխատանքների թեմաները և պետական քննության հարցաշարերը: Պարբերաբար կազմակերպվել են դասալսումներ, և կատարվել է արդյունքների քննարկում:

Ավարտական աշխատանքների թեմատիկան հաստատվել է ըստ ուսանողների և դեկավարների բաշխված ցուցակների:

Ամբիոնի գործունեության վերաբերյալ առկա է ամբիոնի վարիչի հաշվետվություն:

Կազմակերպվել են ընթացիկ քննությունների, քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները, իրականացվել է ավարտական աշխատանքների փուլային նախապաշտպանություն և արդյունքների քննարկում:

Քննարկվել և հաստատվել են ամբիոնային ու անհատական ծանրաբեռնվածությունները:

Մասնաճյուղի կազմակերպած «Համակարգչային գրագիտություն» առարկայի դասընթացը անցել են ամբիոնի վեց դասախոսներ:

Ամփոփվել են ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները:

Ուսումնասիրվել և քննարկվել են ուսանողների առաջարկությունները:

ԳԾԱՆԿԱՐ, ԳՈՒՆԱՆԿԱՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Միրզոյան Արթուր Համլետի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Հովհաննիսյան Սերգեյ Թորգոմի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
2. Մխիթարյան Քրիստինե Համլետի, ՀՀ դիզայներների միության անդամ, ասիստենտ
3. Ջավրուշյան Գևորգ Մկրտիչի, ՀՀ նկարիչների միության անդամ, Յունեսկոյի նկարիչների միության անդամ, ասիստենտ
4. Ստեփանյան Մհեր Օգսենի, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
5. Խաչատրյան Արևիկ Դաֆիկի, դասախոս

Ուսումնառական աշխատակիցներ

1. *Էդիլյան Սոֆյա Սերյոժայի, օպերատոր (ֆիզարձակուրդ)*

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված աշխատանքների

ամփոփում

2012-2013 ուստարվա ընթացքում մասնաճյուղի գծանկար, գունանկարի և դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնները համատեղ կազմակերպել են հետևյալ ցուցահանդեսները.

10. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ցուցահանդեսների շարք:
11. Իջևանի քաղաքային շատրվանների տարածքում I և III կուրսերի ուսանողների ստեղծագործությունների ցուցադրություն:
12. Իջևանի քաղաքային պատկերասրահում Տավուշի և Լոռու մարզերի գեղանկարիչների ստեղծագործությունների համատեղ ցուցահանդես՝ «Աշնանային գույներ» խորագրով:
13. Բերք ու բարիքի տոնին նվիրված մագիստրատուրայի ուսանողների ստեղծագործությունների ցուցադրություն:
14. 2012-2013 ուստարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների ցուցադրություն ԵՊՀ ԻՄ-ի բակում՝ Ուկրաինայից հրավիրված պատվիրակության այցի կապակցությամբ:
15. Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների աշխատանքների ցուցադրություն ԵՊՀ ԻՄ-ի ադմինիստրատիվ շենքի բակում:
16. Գեղեցկության և մայրության տոնին նվիրված ցուցահանդես Իջևանի քաղաքային պատկերասրահում:
17. Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին նվիրված ցուցադրություն նիստերի դահլիճում և նրա նախասրահում:

18. Մասնակցություն նկարիչների միությունում կազմակերպված երեք հանրապետական ցուցահանդեսների:

Այս ուսումնական տարվա ընթացքում Գծանկար, գունանկար ամբիոնում քննարկվել և հաստատվել են՝

- 2012-13 ուստարվա աշխատանքային պլանները և առարկայական ծրագրերը,
- «Գծանկար», «Գունանկար», «Քանդակ» առարկաների ընթացիկ, եզրափակիչ, հանրագումարային, քննությունների գնահատման նոր կարգը,
- ավարտական աշխատանքների թեմաները,
- 2013-17 ուստարվա առարկայական ծրագրերը,
- ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունները:

Ամբիոնի գործունեության վերաբերյալ ամբիոնի վարիչի կողմից տրվել է հաշվետվություն:

Ավարտական աշխատանքների ղեկավար դասախոսների կողմից հաշվետվություն է տրվել ավարտական աշխատանքների ընթացքի մասին և կատարվել քննարկում:

Ամփոփվել են ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները:

Կատարվել է 2013-14 ուստարվա առարկայական ծրագրերի հիմնովին բարելավում:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Զուրաբյան Մարատ Հովհիկի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Մասնագիտություններ

1. Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա
2. Պատմություն
3. Հայոց լեզու և գրականություն
4. Մանկավարժություն և հոգեբանություն
5. Բնապահպանություն և բնօգտագործում
6. Տնտեսագիտության տեսություն
7. Սերվիս

Կրթական աստիճան, մասնագիտություն	Ուսանողների թիվը՝ 933				
5- ամյա ուսուցում բակալավրիատ	I	II	III	IV	V
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	26	21	18	13	19
Բնապահպանություն և բնօգտագործում	28	32	21	30	19
Պատմություն	37	32	35	37	35
Հայոց լեզու և գրականություն	36	20	35	22	25
Մանկավարժութ. և հոգեբանութ.	44	30	42	40	26
Տնտեսագիտության տեսություն	34	38	45	39	29
Սերվիս	25	-	-	-	-
Ընդամենը	230	173	196	181	153

Քննաշրջանների արդյունքներ

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկ- ների թիվը	Առաջադիմության %-ը
1	2	3	4	5
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա				
1-ին		21	-	16
2-րդ	21	16	-	23,8
3-րդ	19	5	-	73,6
4-րդ	13	9	-	30,7
5-րդ	19	10	5	47,3
Բնապահպ. և բնօգտագործում				
1-ին	26		-	19,2
2-րդ	33	25	-	18,1
3-րդ	22	19	-	13,6
4-րդ	30	9	1	70
5-րդ	19	14	-	26,3
Պատմություն				
1-ին	35	27	-	23
2-րդ	32	20	-	37,5
3-րդ	34	30	-	11,7
4-րդ	37	28	-	24,3
5-րդ	35	14	-	60
Հայոց լեզու և գրակ.				
1-ին	36	16	-	55,5
2-րդ	20	16	-	20
3-րդ	35	21	-	40
4-րդ	24	7	-	70,8
5-րդ	25	7	4	72
Մանկ. և հոգեբանութ.				
1-ին	43	5	-	88,3
2-րդ	30	17	1	43,3
3-րդ	43	22	-	48,8
4-րդ	41	24	-	41,4

5-րդ	27	10	-	62,9
Տնտեսագիտութ.				
1-ին	34	26	-	23,5
2-րդ	36	26	-	27,7
3-րդ	47	35	-	25,5
4-րդ	40	24	-	40
5-րդ	31	19	2	38,7
Ընդամենը	937	559	13	40

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկ- ների թիվը	Առաջադիմության %-ը
1	2	3	4	5
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա				
1-ին	26	13	-	50
2-րդ	21	18	-	14,2
3-րդ	18	6	-	67
4-րդ	13	6	-	54
Բնապահպ. և բնօգտագործում				
1-ին	28	17	-	40
2-րդ	32	25	-	22
3-րդ	21	15	-	29
4-րդ	30	15	-	50
Պատմություն				
1-ին	37	22	-	41
2-րդ	32	27	-	15,6
3-րդ	35	31	-	11,4
4-րդ	37	25	-	32,4
Հայոց լեզու և գրակ.				
1-ին	36	19	-	47,2
2-րդ	20	9	-	55
3-րդ	35	14	-	60
4-րդ	22	5	-	77,2
Մանկ. և հոգեբանութ.				
1-ին	44	13	-	70
2-րդ	30	14	-	53,3
3-րդ	42	8	1	84
4-րդ	40	12	-	70
Տնտեսագիտութ.				

1-ին	34	22	-	34
2-րդ	38	22	-	43
3-րդ	45	38	-	16
4-րդ	39	13	-	67
Սերվիս	25	4	-	84
Ընդամենը	780	413	1	48

Շրջանավարտներ

Մասնագիտություն	Ընդամենը՝ 153, այդ թվում նախորդ տարիներից՝ 0
	բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	19(0)
Պատմություն /իրավունքի հիմունքներ/	35(0)
Հայոց լեզու և գրականություն	25(0)
Մանկավարժություն և հոգեբանություն	26 (0)
Բնապահպանություն և բնօգտագործում	19(0)
Տնտեսագիտության տեսություն	29(0)
Ընդամենը	153

ՀԱՄԱՍԱՆՃՅՈՒՂԱՅԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՍԱՐՄՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Պողոսյան Վարդիթեր Գուրգենի, ՄԿՄՎ, ասիստենտ

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Դավթյան Վալերի Սեմյոնի, ասիստենտ, ԽՍՀՄ սպորտի վարպետ
2. Քամալյան Ռոբերտ Վասիլի, դասախոս, քաղապաշտ. շտաբի պետ

Համատեղողներ

1. Մովսիսյան Գայնե Սերյոժայի, դասախոս
2. Վանեսյան Արթուր Հենրիկի, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ադամյան Սաշա Ֆրոնտիկի, սեկց. աշխ. համակարգող, ԽՍՀՄ սպորտի վարպետ

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված աշխատանքների ամփոփում

Ամբիոնն իր ուսումնադաստիարակչական և սպորտ-մասսայական աշխատանքները կազմակերպում է՝ հիմք ընդունելով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար մշակված բուհերի ամբիոնների աշխատանքների կազմակերպման և բովանդակության մասին հրահանգը:

Կատարվող աշխատանքները հիմնականում ուղղված են մասնաճյուղում ուսանողների ֆիզիկական կատարելագործման, առողջական վիճակի և ֆիզիկական դաստիարակչության նշանակության հարցերին, ինչպես նաև ՔՊ, ԱԻ հիմնահարցերի և ԱԲՕ-յան ծրագրերի նորմատիվային վարժածների կատամանը:

Ուշադրության կենտրոնում է եղել առաջին բուժօգնության գործնական դասերի անցկացումը: Հետևողական իրականացվել են ուսանողների նախաստուգարքային նորմատիվները և ստուգարքներին նախապատրաստման գործընթացը: Աշխատանքներ են տարվել ուսումնանյութական բազայի բարելավման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակշրջանում նախապատրաստվել և անցկացվել են սպորտային միջոցառումներ, առաջնություններ.

1. ՀՀ մարզերում և ԼՂՀ 2012թ. անցկացրած մարզային փառատոն (14 սեպտեմբեր 2012)
2. Անկախության 21-րդ տարեդարձին նվիրված վոլեյբոլի, փետրագնդակի մասնաճյուղային առաջնություն (17-27 սեպտեմբեր 2012)
3. Բասկետբոլի և վոլեյբոլի մասնաճյուղային առաջնություն (10-17 հոկտեմբեր 2012)
4. Շախմատի և սեղանի թենիսի մասնաճյուղային առաջնություն (12-16 նոյեմբեր 2012)
5. Վոլեյբոլի մասնաճյուղային առաջնություն (25-28 փետրվար 2013)
6. Բազկամարտի մասնաճյուղային առաջնություն (4-5 մարտ 2013)
7. Փետրագնդակի բաց առաջնություն (11-14 մարտ 2013)
8. Շախմատի և սեղանի թենիսի մասնաճյուղային առաջնություն (25-28 մարտ 2013)
9. Սպորտլանդիայի մասնաճյուղային առաջնություն (8-13 ապրիլ 2013)
10. Վոլեյբոլի բաց առաջնություն (25-30 ապրիլ 2013):

Հոկտեմբերի 22-ից 23-ը Երևանում տեղի ունեցավ փետրագնդակի ՀՀ առաջնություն: Հաջող հանդես եկավ Կիրառական արվեստի ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանողուհի Անգին Մամյանը՝ գրավելով 7-րդ տեղը:

Մայիսի 18-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մարզադահլիճում տեղի ունեցավ վոլեյբոլի բաց առաջնություն: Հաղթող ճանաչվեց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների թիմը:

Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի ունեցավ սեղանի թենիսի ընկերական հանդիպում: 5:1 հաշվով հաղթեց մասնաճյուղի թիմը:

Անդրանիկ Մարգարյանի հիշատակին նվիրված ֆուտբոլի եզրափակիչ փուլում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆուտբոլի թիմը հանդիպեց Երևանի հավաքական թիմի հետ և գրավեց 2-րդ տեղը:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Ստեփանյան Նելլի Գրիգորի

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի կենտրոնը հաշվետու ժամանակաշրջանում որոշակի աշխատանքներ է իրականացրել տարածաշրջանային աշխատանքի շուկայում մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների մասնագիտական մրցակցության զարգացման և այն ավելի արդյունավետ դարձնելու գործում: Կենտրոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Ստեղծվել է շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ համակարգչային բազա ACCESS ծրագրային համակարգով: Մշտական համագործակցված աշխատանքային կապ է պահպանվել տարածաշրջանի պետական, մասնավոր և կոլեկտիվ կազմակերպությունների ու տնտեսությունների հետ, որի ընթացքում հստակ տեղեկություններ են ստացվել աշխատաշուկայի առկա և հեռանկարային զարգացման միտումների վերաբերյալ:

- ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների հետ ուսումնառությանը զուգահեռ աշխատանքային փորձի ձևավորման ու տիրապետման նպատակով միջոցներ են ձեռնարկվել նրանց ուսումնաարտադրական պրակտիկան ավելի նպատակային կազմակերպելու ուղղությամբ:

- Մասնաճյուղի շրջանավարտների հետ ըստ նրանց բնակության և աշխատանքի վայրի մշտական կապ է պահպանվել, և այդ ընթացքում կատարված հարցումների միջոցով

տեղեկություններ են հավաքվել արտաքին շահառուների կողմից մեր ուսումնական հաստատության շրջանավարտների մասնագիտական գիտելիքների վերաբերյալ:

- Կենտրոնի կողմից պարբերաբար ուսումնասիրվել է ուսանողների և շրջանավարտների կողմից աշխատանք գտնելու հիմնախնդիրների ուղղությամբ տարվող աշխատանքների վիճակը, որի ընթացքում մասնակիորեն պարզվել են այն պատճառներն ու պայմանները, որոնք խանգարում են այդ կարևոր գործընթացի իրականացմանը:

- Աշխատանք գտնելու և դրա հետ կապված այլ հիմնահարցերի պարզաբանման նպատակով կազմակերպվել են խորհրդակցություններ և կլոր սեղաններ:

- Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից մասնաճյուղում ստեղծվել է առանձին ցուցատախտակ և գովազդային անկյուն, որտեղ փակցվում են կենտրոնի գործառույթների վերաբերյալ իրավական փաստաթղթեր՝ մարզի տարբեր կազմակերպությունների կողմից պարբերական մամուլում աշխատանքային տարբեր պաշտոնների համար տպագրված հայտարարություններ և այլ փաստաթղթեր:

- Առկա և հեռակա ուսուցման համակարգերի բոլոր շրջանավարտների շրջանում անց են կացվել ստացած գիտելիքներից բավարարվածության վերաբերյալ հարցումներ: Լրացման նպատակով տրվել են շրջանավարտների գրանցման թերթիկներ, որում նշվել են նրանց անձնական տվյալները, մասնագիտությունները, համակարգչային և լեզուների իմացության վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև բուհ-ի գործընթացի կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ և ցանկություններ: Թերթիկների մեջ արձանագրված առաջարկություններն ու մեկնաբանությունները հետագայում հաշվի են առնվում՝ դրանց ուղղությամբ համապատասխան աշխատանքներ կատարելու համար:

Նախատեսվում է թարմացնել և մշակել ժամանակի պահանջներին համահունչ նոր աշխատանքային ծրագիր:

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

1. Հիմնարար վերանորոգվել են մասնաճյուղի առաջին մասնաշենքի առանձին շինությունները իրար միացնող երկու միջանցքները, այդ թվում՝ հին մետաղյա եզրակողերով պատուհանները փոխարինվել են եվրոպատուհաններով, առանձին մասերում հին պատուհանները պատվել են և վերանորոգվել:
2. Վերանորոգվել են նաև նույն մասնաշենքի առանձին շինությունների առաջին հարկից երկրորդ հարկ տանող աստիճանները և եզրապատուհանները:

3. Առաջին մասնաշենքի բակում տեղադրվել են անհատական կառուցվածքի և հնգական լամպով չորս լուսային մետաղյա սյուներ:
4. Կենտրոնական մասնաշենքի բակում կառուցվել է նոր ցայտադրյուր, բակից հեռակա բաժին տանող նոր մայթ է կառուցվել:
5. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի սենյակներից մեկը կահավորվել է որպես անգլերեն լեզվի ուսուցման սրահ:
6. Հիմնարար վերանորոգվել են հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողների համար նախատեսված երկու զուգարանները:
7. Վերանորոգվել են Հեռակա ուսուցման բաժնի երկու աշխատասենյակները:
8. Վերանորոգվել են Հումանիտար գիտությունների և Տնտեսագիտության ֆակուլտետների դեկանների աշխատասենյակները:
9. Մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչությունում, հաշվապահությունում, գրադարանում, արվեստանոցներում տեղադրվել են օդորակիչներ:
10. Կահավորվել է նոր բուժկետ:
11. Բնական գիտությունների ֆակուլտետում ստեղծվել է երկրորդ համակարգչային սրահ, վերանորոգվել են լսարանները և ներկվել են ուսանողական նստարանները:
12. Մասնաճյուղի առանձին ստորաբաժանումներին տրամադրվել է նոր գրասենյակային զույք:
13. Մասնաճյուղի համար ձեռք են բերվել նոր համակարգիչներ և այլ էլեկտրոնային սարքեր:

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ՝

Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ